ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _____ 3

1. Դպրոցի բնութագիրը _____ 4

2. Դպրոցի առաքելությունը_____ 5

3. Իրավիճակի վերլուծություն (ուժեղ և թույլ կողմեր)_____ 7

4. Դպրոցի հիմնախնդիրների լուծման ուղիները, պատասխանատուներն ու կատարման ժամանակացույցը_____10

5. Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործումը _____12

6. Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավում _____14

7. Հայրենասիրական դաստիարակություն_____15

8. Ուսուցչի առաքելությունն ու նրան ներկայացվող նոր պահանջները_____16

9. Աշակերտական ինքնակառավարման բարելավումը_____18

10. Զարգացման գերակայությունը_____19

11. Դպրոցի զարգացման ծրագրից ակնկալվող արդյունքները _____21

Ներածություն

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը:

Դպրոցի զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ԴԶԾ) հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է: Այն արտացոլում է դպրոցի 5 տարվա տեսլականը:

ԴԶԾ-ի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում: Ալավերդու «Ստ. Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոցում» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028թթ. ծրագիրը մշակվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթներին համապատասխան՝ հաշվի առնելով դպրոցի ձեռքբերումները և առկա հիմնախնդիրները:

Դպրոցի բնութագիրը

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 30.01.2012թ. հր. N 80-Ա-Ք իրավաբանական անձանց պետռեգիստրում գրանցվել է 08.09.2003թ. գրանցման թիվ՝ 22221000193, վկայական՝ 03-Ա-174948 ՀՎՀՀ 06604294:

- ✓ Դպրոցի գտնվելու վայրն է՝ ք. Ալավերդի, Խուդյակովի 2ա-22
- ✓ Դպրոցն ունի ՀՀ զինանշանով կլոր կնիք:
- ✓ Դպրոցական շենքը տիպային է, կառուցվել է 1957թ. նախատեսված է 400 աշակերտի համար:
- ✓ 2011 թվականից դպրոցն ունի ավագ դպրոցի կարգվիճակ:
- ✓ Դպրոցը միահերթ է և աշխատում է 5-օրյա աշխատանքային ռեժիմով:
- ✓ Դպրոցն ունի 6 դասասենյակ, գրադարան, 2 լաբորատորիա, 2 ռազմագիտության և 1 համակարգչային կենտրոն, արհեստանոց, սպորտային դահլիճ, բուժկետ, հաշվապահի սենյակ, տեխաշխատողների սենյակ, նախակրթարանի 2 դասասենյակ, ուսուցչանոց:
- ✓ 2022-2023 ուստարում կոմպլեկտավորվել է 6 դասարան՝ 96 աշակերտով:
- ✓ Դպրոցն ունի 28 աշխատակից, որոնցից 17 մանկավարժական աշխատողներ:
- ✓ 2-ը մասնակցելով կամավոր ատեստացիայի, բարձրացրել են իրենց դրույքաչափերը, 4 ուսուցիչներ ունեն 1-ին աստիճանի տարակարգ:
- ✓ Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 12 դասաժամ է:
- ✓ Դպրոցը հանդիսանում է ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվող նոր ՀՊՉ վերապատրաստող մենթոր ավագ դպրոց: Դպրոցի տնօրենը, փոխտնօրենը և 2 ուսուցիչներ հանդիսանում են մենթորներ:

Դպրոցի առաքելությունը

Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:

Մեր օրերում և հասարակական գիտակցության, և պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն: Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:

Ալավերդու թիվ 5 ավագ դպրոցի առաքելությունը սովորողների հիմնական կրթությունից հետո ազգային հենքի վրա որակյալ ավագ կրթություն տալն է՝ կազմակերպելով նախամասնագիտական առարկաների խորացված և արդյունավետ ուսուցում, ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրությայն ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը՝ և կյանքում, և աշխատանքում իր տեղը գտնելու համար:

Ավագ դպրոցը շարունակելու է նախամասնագիտական ուսուցումն ու խորացված ուսուցումը հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերում՝ ըստ աշակերտների նախասիրությունների:

Ուսուցումն ավագ դպրոցում, ունենալով մասնագիտական կողմնորոշվածության, միաժամանակ պետք է հնարավոր ճկունություն ապահովի, որպեսզի սովորողները, իրենց հավակնությունների և նախասիրությունների փոփոխության, ինչպես նաև ուսուցման ընթացքի արդյունքներից ելնելով, հնարավորություն ունենան վերակողմնորոշվելու: Նման ճկունություն ապահովելու նպատակով ավագ դպրոցում կրթության մասնագիտական շեշտվածությունը պետք է աճի աստիճանաբար՝ դասարանից դասարան: Թե ինչպիսին պետք է լինի ավագ դպրոցի կրթությունը, ինչ մարտահրավերներ պետք է այն հաղթահարի, հայտնի է բոլորիս, կամ համարյա հայտնի է: Սակայն դպրոցի բարեփոխումն այս դեպքում ոչ մի արդյունք չի ունենա, քանի դեռ չեն լուծվել մի քանի առավել կարևոր խնդիրներ:

Այսպիսով, ավագ դպրոցի առաքելությունն է՝ ապահովել.

1. Սովորողների պատրաստվածությունը ինքնուրույն կյանք վարելու.

2. Իրենց հակումներին, ընդունակություններին, կարողություններին և նախասիրություններին համապատասխան միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը.
3. Կյանքում սեփական եսը գտնելու համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ.
4. Պետք է խթանի սովորողի, անհատի ազատ և համակողմանի զարգացումը.
5. Պետք է բավարարի սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների վերլուծություն

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ	
➢ Դպրոցի տնօրենությունը ունի դպրոցի ղեկավարման և կառավարման անհրաժեշտ պատրաստվածություն, տիրապետում է դպրոցի ուսումնադաստիարչական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտների ղեկավարման առանձնահատկություններին: ➢ Դպրոցի գործունեությունը բաց է ու թափանցիկ, աշխատանքի արդյունքները տեսանելի են բոլորին: ➢ Դպրոցը համագործակցում է համայնքի հետ: ➢ Դպրոցը ուսումնադաստիարակչական հանցերում փորձում է ապահովել աշակերտակենտրոն մոտեցում՝ ներդաշնակորեն համադրելով ուսուց-ման ավանդական և արդիական մեթոդ-ների կիրառումը: ➢ Ուսումնաօժանդակ կազմը պարտա-ճանաչ և պատասխանատու ձևով կատարում է իր պարտականությունները ➢ Ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ, որի արդյունքում աճել է ինտեգրված դասերի քանակը: ➢ Համագործակցություն այլ դպրոցների հետ: Աճել են ուսուցիչների ստեղծագոր-Ծական աշխատանքի հմտությունները: ➢ Դպրոցի բարեփոխումները համախոհ ուսուցիչները առկայություն: ➢ Մանկավարժական ամբողջ անձնա-Կազմը համայնքի բնակիչներ են՝ հարուստ աշխատանքային փորձով: ➢ Նորամուծությունների նկատմամբ մանկավարժների ցանկության առկայու-Թյուն: ➢ Ռազմահայրենասիրական դաստիարակության պատշաճ մակարդակ:	➢ Թույլ սովորողների խրախուսման և ակտիվացմանմեթոդների ոչ արդյունա-վետ կիրառումը: ➢ Կան ուսուցիչներ, ովքեր դեռ հրահանգողի դերում են, ինչը սահմանափակում է սովորողի ազատ մտածելու հնարավորությունը: ➢ Ուսուցիչներից ոմանք չեն կիրառում նոր տեխնոլոգիաներ: ➢ Անհրաժեշտ է վարպետորեն համադրել ուսուցման ժամանակակից, ավանդական մեթոդներն ու հնարները՝ օրինակելի դաս կազմակերպելու համար:

Կառավարման և խորհրդակցության մարմիններ	
➢ Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհուրդներ՝ կառավարման, մանկավարժական, ծնողական, աշակերտական: ➢ Դպրոցում գործում է 2 առարկայական մեթոդմիավորում, որոնք ամիսը 1 անգամ գումարում են նիստեր և արդյունավետ կազմակերպում աշխատանքները: ➢ Դպրոցը համագործակցում է ծնողների հետ. Գործուն մասնակցություն ունի համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ աշակերտներին ներգրավելով այդ գործընթացներում՝որպես կամավորների ➢ Մեծ ակտիվությամբ գործում է աշակերտական ինքնավարության մարմինը՝ աշակերտական խորհուրդը: ➢ Ստեղծված է դպրոցական կայք, որտեղ տեղադրված են ուսումնադաստիարակչական գործընթացին վերաբերող նյութեր:	➢ ԱԽ-ն թույլ է համագործակցում հասարակական կազմակերպությունների հետ: ➢ Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ: ➢ Թույլ է գործում դպրոցի կառավարման խորհուրդը: ➢ Ծնողական խորհուրդը կարող է ավելի ակտիվ մասնակցություն ունենալ դպրոցի հեռանկարային պլանների քննարկմանը:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐ	
➢ Աշակերտները ունեն բազմաբնույթ հետաքրքրություններ: ➢ Ակտիվ մասնակցություն են ունենում կազմակերպվող միջոցառումներին: ➢ Բարձր է հայրենասիրական ոգին:	➢ Որոշ աշակերտների անտարբերությունը ուսման նկատմամբ: ➢ Երեխաները հաճախակի բացակայում են դասերից: ➢ Աշակերտների ինքնագնահատման օբյեկտիվությունը:
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	
➢ Դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում: ➢ Դպրոցի լաբորատորիաները համալրվում են նոր գույքով և լաբորատոր սարքավորումներով: ➢ Դպրոցն ունի համակարգչային սենյակ, ինտերնետ կապ, սպորտային դահլիճ: ➢ Դպրոցում դասապրոցեսը կազմակերպված է 1 հերթով: ➢ Դպրոցն ունի շենքային լավ պայմաններ:	➢ Դպրոցի բաց՝ սպորտհրապարակն ունի հիմնանորոգման կարիք: ➢ Համակարգչային սենյակը չունի համապատասխան համալրում: ➢ Առարկայական կաբինետները ապահովված չեն նոր սերնդի համակարգիչներով և էլեկտրոնային գրատախտակներով: ➢ Վերանորոգման կարիք ունի ջեռուցման համակարգը: ➢ Պատուհանները փոխելու կարիք կա:
Հաղորդակցություն, համագործակցություն	
➢ Դասավանդման ընթացքում ուսուցիչներն աշակերտների միջև ստեղծում են փոխհամագործակցության կապեր: Ակտիվ է համագործակցությունն այլ դպրոցների հետ: Իրականացվում են դպրոց-ընտանիք փոխհամագործակցությունն ամրապնդող միջոցառումներ:	➢ Թույլ է խորհուրդների միջև համագործակցությունը:
Բյուջե, Ֆինանսներ	
➢ Կայուն պետական ֆինանսավորում: ➢ Ֆինանսների ճիշտ և գրագետ բաշխում:	
Հնարավորություններ	
➢ Մանկավարժության ժամանակակից պահանջներին համապատասխան հմտությունների, կարողությունների, արժեքային համակարգի ձևավորում: ➢ Կրթության որակի բարձրացում: ➢ ՏՀՏ-ների կիռարում դասի ընտացքում: ➢ Աշխատանքային կագապահության բարձրացում;	

ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ՝ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Առկա հիմնախնդիրներ	Հիմնախնդիրների լուծման գործողություններ	Պատասխա-նատուներ	Կատար-ման ժամանա-կացույց	Հնարավոր վտանգներ
Հոգաբարձուների խորհրդի բացակայություն	1.Ծնողական խորհրդի,նախկին շրջանավարտների, Համայնքի օգնությամբ Հնարավորության Դեպքում ստեղծել հոգաբարձուների խորհուրդ:	Տնօրեն, Ծնողական Խորհուրդ, Կառավարման խորհուրդ	2023-2028թթ.	Համայնքի պասիվություն
Դպրոցի տեխնիկապես հագեցվածություն	1.Հոգաբարձուների խորհրդի միջոցով լրացուցիչ արտաբյուջետային միջոցների հայթայթում 2.Համապատասխան Պահանջարկի և Հնարավորությունների դեպքում կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: 3.Պետական ֆինանսավորման միջոցների արդյունավետ օգտագործում	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, դասղեկներ, ծնողական խորհուրդ, հաշվապահ	2023-2328թթ.	1,Հոգաբարձու-ների խորհրդի ձևավորման անհնարինութ-յուն 2.Ֆինանսական միջողների բացակայութ-յուն, ձեռնար-կատիրական գործունեութ-յան իրակա-նացման անհնա-րինություն
Ուսուցիչների նկատմամբ խրախուսման և տույժի կիրառման բացակայություն	Իրականացնել պաշտոնի նկարագրով սահմանված պարտա-կանությունների կատարման դեպքում խրախուսման գործողություններ/ պատվոգրեր, դրամական պագևներ, պաշտոնական աճ/:	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, ԾԽ նախագահ	2023-2028թթ.	Ծագած խնդրի ոչ լիարժեք արժևորում, որի դեպքում կիրառվում է արտաքին ոչ համապատաս-խան գործողություն

Աշակերտական խորհրդի գործունեության ակտիվացում	Ուսումնասիրել հանրապետությունում գոյություն ունեցող փորձը: Իրականացնել դասղեկների վերապատրաստում: Կազմակերպել աշակերտական խորհրդի վարչական տույժի կիրառում օրենքով սահմանված կարգով:			
Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում	Բարձրացնել տնօրենի՝ կրթական աջակցությունների գծով տեղակալի, դասղեկների մասնագիտական մակարդակը վերապատրաստումների միջոցով	Տնօրեն, ՄԿԱ տեղակալ, դասղեկներ	2023-2028թթ	Վերապատրաս-տում
Աշակերտների խրախուսման և տույժի կիրառման մեխանիզմների բացակայություն	Աշակերտների խրախուսման և տույժի կիրառման մեխանիզմների ակտիվացման գործում ընդգրկել դասղեկներին, մանկավարժական կազմին, աշակերտական խորհրդին, ինչպես նաև ԾԽ-ին, ՀԽ-ին:	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, դասղեկներ Աշակերտական խորհուրդ, ԾԽ՝ ՀԽ	2023-2028թթ.	Օրենքով սահմանված կարգով տույժի և խրախուսման քայլի ոչ ճիշտ իրականացում

ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Դաստիարակությունը հանրակրթության կարևորագույն բաղադրիչ մասերից մեկն է, և հենց դպրոցին և ուսուցչին է բաժին ընկնում դաստիարակչական գործընթացի զգալի բաժինը, որի մի մասն էլ աշխատանքն է ծնողների հետ:

Դաստիարակչական համակարգի նպատակն է՝

- Օգնել սովորողին՝ առանց սթրեսների հարմարվելու իր «աշխարհում» անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին.
- Նպատակաուղղել սովորողին ազգային և համամարդկային արժեքների համակարգում ձևավորելու որպես ապագա քաղաքացու.
- Զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը.
- Աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով աշակերտներին այդ արժեքների կայուն կրողը.
- Յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ.
- Ընդգրկել սովորողներին արտադասարանական և արտադպրոցական ոլորտում
- Ապահովել մասնագիտական կողմնորոշումը:

Վերոնշյալ խնդիրները նպատակ են հետապնդում ստեղծելու հնարավորինս միասնական դաստիարակչական միջավայր: Դպրոցի դաստիարակչական միջավայրը ներառում է՝

- ✓ Դպրոցի անձնակազմը
- ✓ Ակտիվ ծնողական համայնքը
- ✓ Դասարանական անձնակազմը
- ✓ Աշակերտական ինքնավարության ձևավորումը
- ✓ Դպրոցի ավանդույթները

Իմ կարծիքով դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

- Դաստիարակչական գործընթացում առաջնորդվել միասնական սկզբունքներով և կանոններով, միասնական մանկավարժական պահանջներով,
- Ծնողներին ակտիվորեն ընդգրկել դպրոցի դաստիարակչական գործընթացի մեջ,
- Մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը և բացահայտել առկա խնդիրները և բացթողումները՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ,
- Ամրապնդել ինչպես աշակերտների միջև, այնպես էլ աշակերտների և ուսուցիչների միջև համագործակցությունը,

- Յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ ցուցաբերել անհատական մանկավարժական աջակցություն,ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ դժվար դաստիարակվող երեխայի հետ,
- Դասղեկական ժամերին, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների միջոցով իրականացնել բարոյական և հայրենասիրական դաստիրարակչական ծրագրեր,
- Մշտապես կարևորել ինքնադաստիարակությունը,
- Աշխատանքները կազմակերպել այնպես, որ աշակերտների մոտ ինքնուրույն վերափոխվելու ցանկություն առաջանա:

Դպրոցում ուսումնական և դաստիարակչական համապատասխան միջավայրի ստեղծումը կնպաստի աշակերտների սոցիալականացմանը, նրանց հոգևոր, բարոյական և ֆիզիկական զարգացմանը, առողջության պահպանմանը: Այս առումով կարևորում եմ նաև իմ՝ տնօրենի, ապա փոխտնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, բոլոր ուսուցիչների, զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցչի /զինղեկ/, գրադարանավարի և մյուսների դերը և անձնական օրինակը:

<u>ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>

- Դաստիարակչական աշխատանքների համակարգը նպատակաուղղել համակողմանի զարգացած, առողջ հոգեբանություն և ինքնուրույն գործելակերպի տեր սերունդ ունենալու խնդրին:
- Ապահովել ու ամրապնդել ուսումնական և դաստիարակության միասնականությունը:
- Ընդլայնել սովորողների հետաքրքրությունների շրջանակը:

ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Դաստիարակությունը հաջողությամբ է պսակվում, եթե ընտանիքի հետ աշխատանքը և երեխայի դատիարակությունը կատարվում են միաժամանակ: Այսօրվա պայմաններում առանց ընտանիքի հետ ձևավորված համագործակցության առկայության հնարավոր չէ արդյունավետ կերպով կազմակերպել սովորողների հետ աշխատանքը:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավումը նպատակ ունի՝

- Ավելի արդյունավետ դարձնելու ընտանիք-դպրոց փոխհարաբերությունները՝ բարձրացնելու փոխադարձ վստահության մակարդակը,
- Բարձրացնելու աշակերտների ուսուցման արդյունքների համար ծնողների պատասխանատվությունը,
- Ծնողին ավելի ակտիվորեն ներգրավելու դպրոցի գործունեության մեջ,
- Բարձրացնելու ծնողների և ուսուցիչների խմբային աշխատանքների արդյունավետությունը:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավման համար անհրաժեշտ է՝

Դպրոցի և ծնողների համագործակցության բովանդակության մեջ ներառել հետևյալ հիմնական ուղղությունները՝

- Ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածության բարձրացում,
- Ուսումնադաստիարակչական գործընթացին ծնողների մասնակցության ընդլայնում,
- Դպրոցի կառավարման գործընթացում ծնողների մասնակցության մեծացում,
- Հանձնարարել դասղեկներին անվերապահորեն ծանոթանալ յուրաքանչյուր աշակերտի ընտանիքի հետ: Դասղեկը պետք է տեղյակ լինի այն սովորողների մասին,որոնց ծնողները միայնակ են, հաշմանդամ կամ գործազուրկ, զոհվել են, կամ որոնց ընտանիքները նյութապես անապահով են և ունեն կյանքի անբավարար պայմաններ,
- Կատարելագործել՝ ծնողի հետ աշխատանքի ավանդական մեխանիզմները և պարբերաբար կազմակերպել ծնողական և անհատական զրույցներ,
- Ապահովել դասարանական և ծնողական խորհուրդների ակտիվ գործունեությունը,
- Ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ պարբերաբար կազմակերպել տարբեր միջոցառումներ,
- Ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվորեն մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնությունները, խրախուսել երեխաների և ծնողների համատեղ ստեղծագործական գործունեությունը,
- Ամրապնդել ծնողական խորհրդի կապը աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում բարելավել պետական խորհրդանիշների հանրահռչակման անկյունը: Մշակել քաղաքացիական դաստիարակության ծրագիր, որը կօգնի ձևավորել այնպիսի քաղաքացու, որը ազգային-պետական, հոգևոր-մշակութային արժեքների կատարմամբ մեծ հարգանք կունենա:

Մատաղ սերնդի հայրենասիրության դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունը ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն են անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու,սիրո զգացմունքն արտահայտելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար:

Ծրագիրը հիմնականում պետք է արտահայտված լինի դասղեկների տարեկան աշխատանքային պլաններում, ինչպես նաև առանձին առարկաների դասաժամերին ինտեգրված դասերի ձևով՝ սովորողների մոտ սերմանելով այդարժեքները: Դա կարելի է իրականացել հետևյալ կերպ՝

- Պատմամշակութային օբյեկտների այցելությունների կազմակերպում:
- Հնարավորություն ստեղծել պատմական Հայաստանի տարածքներ այցելություններ կազմակերպելու համար:
- Ազգային հերոսներին նվիրված արիության դասերի, բաց դասերի անցկացում:
- Համալիր միջոցառումների անցկացում ազգային պետական տոների օրերին:

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՈՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ուսուցիչը պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և անհատի ձևավորման գործում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտականանհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորացնելու ժամանակակից մեթոդները, մշտապես կատարելագործի իր մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցելով վերապատրաստման դասընթացներին՝ զբաղվի ինքնակրթությամբ:

Այսօր կրթությունը խրախուսում է ուսուցչի ստեղծագործական մոտեցումը դասավանդման և կրթության կազմակերպման գործընթացում միաժամանակ պահանջելով նրանից զարգացնել անհրաժեշտ կարողություններ:
ժամանակակից կրթության հարացույցը ներկայացվում է 4 հիմնական բաղադրիչներով.

- 1. Ճանաչողական
- 2. Մարդակենտրոն / երեխայակենտրոն
- 3. Մատչելիության /բոլոր սոցիալական խավերի, բոլոր կարողությունների տեր մարդկանց համար /
- 4. Մշակութահեն / հարգել սովորողների մշակութային տարբերությունները/:

Յուրաքանչյուր ուսուցիչ.

- Պետք է կարողանա հաշվի առնել իր առարկայի հիմքը, դրսևորել քննադատական մտածողություն և պատկերացնել միջառարկայական կապը, նպաստել հանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը, ապահովել փոխադարձ հարգանք,
- Անհատականացնի ուսուցման գործընթացը, նպաստի սովորողների ինքնուրույն զարգացմանը,
- Պետք է կիրառի գնահատման տարբեր գործիքներ ուսուցման գործընթացը կատարելագործելու համար,
- Պետք է ակտիվորեն կիրառի ժամանակակից տեխնոլոգիաները՝ ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,
- Ցուցաբերի նախաձեռնություն մասնագիտական զարգացման նկատմամբ պատասխանատվության բարձրացման հարցերում:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի նպատակն է՝

- Յուրաքանչյուր ուսուցչի համար դպրոցում ստեղծել հարմարավետ ստեղծագործական միջավայր
- Տարածել առաջավոր մանկավարժական փորձը / մասնախմբի նիստերում, գործնական պարապմունքների, դասալսումների վերլուծության, մանկավարժական գիտաժողովներիի, կոնֆերանսների և նմանատիպ այլ միջոցառումների ժամանակ/,
- Բարելավել մանկավարժական անձնակազմի մասնագիտական որակը,

- Խրախուսել մանկավարժներին՝ հետազոտական աշխատանքներ կատարելու և սեփական գիտակրթական նյութերը ներկայացնելու համար՝ ապահովելով նրանց մանկավարժական աճը:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

- Մանկավարժների համար դպրոցում ստեղծել տեղեկատվական մի համակարգ, որի միջոցով ուսուցիչը հնարավորություն կունենա մշտապես համալրելու իր գիտելիքները հետևյալ ուղղություններով՝
- Դպրոցի և կրթության նկատմամբ նոր պահանջներ
- Ժամանակակից մանկավարժական փորձ
- Հոգեբանություն և մանկավարժություն

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Աշակերտական ինքնավարությունը, 2011թ.ի մայիսի 27-ին ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 571-ի հրամանով հաստատված աշակերտական խորհրդի կանոնների համաձայն, դպրոցում յուրաքանչյուր ուսումնական տարում ձևավորվում է աշակերտական ինքնավարության մարմին: Բոլորը աշակերտների ինքնավարության մեջ պետք է տեսնեն ոչ թե երեխայի կամ մի խումբ երեխաների կողմից մյուսների հանդեպ իշխանության չարաշահման միջոց, այլ քաղաքացիական հասարակության մեջ կառավարելու ընդունակությունների ձեռքբերման և քաղաքացիական հասարակություն տեսնելու համոզմունքի ձևավորում:

<u>Առաջարկվող միջոցառումների արդյունքում ակնկալվում , որ դպրոցում՝</u>

- Կհամախմբվի աշակերտական համակազմը:
- Կձևավորվեն և կպահպանվեն նոր ավանդույթներ:
- Աշակերտները ձեռք կբերեն կյանքի հմտություններ:
- Կբարձրանա միջոցառումներին մասնակցելու աշակերտների ցանկությունն և անհրաժեշտ պայմաններ:
- Կբարձրանա կարգապահությունը, մանկավարժական համակազմի պատասխանատվությունը, աշակերտի կյանքում՝ դպրոցի դերը:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

« Ալավերդու Ստ. Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց » ՊՈԱԿ-ում կրթության բնագավառի գերխնդիրը շարունակում էմանել կրթության որակի բարձրացումը և սովորողների կողմից իրենց ձգտումներին և ընդունակությունների համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: Դրան նպաստելու համար անհրաժեշտ եմ համարում՝

ա/ *Ընդլայնել դպրոցի Կառավարման խորհրդի աշխատանքները հետևյալ ուղղություններով՝*

- Նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունում, պետական լիազոր մարմնին առաջարկությունների ներկայացում,
- Դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- Դպրոցի դերի և հեղինակության բարձրացում համայնքի բնաչության շրջանում,
- Փորձիփոխանակման, ուսուցիչների նաշակերտների փոխանակման նպատակով արտասահմանյան որևէ կրթական հաստատության հետ կապի ստեղծում:

բ/ *Բարելավել Ծնողական և Աշակերտական խորհուրդների դերը և նրանց ընդգրկել ուսումնական կարևորագույն գործառույթներում, հատկապես ծնողների՝ որպես առաջնային շահառուների հետ համագործակցությունը պետք է ավելի ակտիվ լինի: Այս առումով Ծնողական խորհրդին պետք է վերապահել նաև հետևյալ լիազորությունները.*

- Ծնողի և դպրոցի միջև կապերի ամրամնդում,
- Ծնողների և մանկավարժական համակազմի կողմից երեխաների դաստիարակության հարցում մ,իասնական պահանջների ձևավորում,
- Արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներիծնողների ակտիվ մասնակցություն,
- Դպրոցի շրջանակներում որոշումների կայացման գործին ծնողների մասնակցության նպաստում:
- Ճշտել դպրոց հաճախող երեխաների թիվը, որոնք օգտվում են «Փարոս» ծրագրից,
- Երկկողմանի ծնողազուրկ երեխաների թիվը,
- Միակողմանի ծնողազուրկ երեխաների թիվը,
- Հաշմանդամ աշակերտների վերաբերյալ տեղեկություններ,
- Նյութապես անապահով սովորողների կազմը,
- Ծնողների խնամքից զրկված աշակերտների թիվը,
- Միայնակ մոր խնամքի տակ գտնվող աշակերտների մասին տվյալներ,
- Աշակերտների թիվը, որոնց ծնողները գտնվում են արտերկրում:

գ/ դպրոցում ստեղծել էլեկտրոնային գրադարան. Էլետրոնային ձեռնարկներով իրականացնել հեռավար ուսուցման ներդրման փորձարարական ծրագիր,

դ/ ընդլայնել ՏՀՏ-ի ներդրման գործընթացը, ձեռք բերել նոր համակարգիչներ: Հասնել նրան որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա ազատ օգտվել համացանցից:

Ակնկալվող արդյունքները

- Հանրակրթության մատչելիություն յուրաքանչյուր երեխայի համար:
- Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին աջակցության ցուցաբերում:
- Դասագրքերի վարձավճաների զեղչերի կիրառում:
- Կառավարության և բարեգործական հիմնադրամների, եկեղեցու կողմից կազմակերպված ամառային ճամբարներում այդպիսի երեխաների մասնակցության ապահովում:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Որպես Ալավերդու թիվ 5 ավագ դպրոցի դպրոցի տնօրենի հավակնորդ՝ սույն զարգացման ծրագրով հնգամյակում /2023-2028թթ./ նախատեսված աշխատանքների բարեհաջող կատարման արդյունքում ակնկալում եմ՝

- Աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք,դպրոց-վարչական տարածք հարաբերությունների ամրապնդում:
- Դպրոցի և ուսուցչի հեղինակության բարձրացում:
- Դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացում;
- Աշակերտների կրթության որակի էական բարելավում:
- Ուսուցիչների վերապատրաստումների և ատեստավորումների արդյունքում դասավանդող կադրերի որակական կարողությունների հզորացում և տարակարգ ունեցող ուսուցիչների թվի ավելացում:
- Տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաների կիրառության ընդլայնում:

Հիմք ընդունելով կառավարության նորմատիվային փաստաթղթերը, Ալավերդու թիվ 5 ավագ դպրոցի մոտակա 5 տարիների համար նախատեսված զարգացման ծրագիրը՝ իմ բոլոր ջանքերն ու եռանդը նպատակաուղղելու եմ դպրոցի գործունեության բարեփոխմանն ու առաջընթացի կայունացմանը:

Դպրոցը պիտի հաղթահարի առկա խնդիրները, հասնի նրան, որ յուրաքանչյուրը գիտակցի հասարակական հարաբերությունների զարգացման ներկա միտումների հետ կապված միջնակարգ դպրոցի շրջանավարտներին ներկայացրող արդի պահանջները՝ սահմանված կրթակարգով և հանրակրթության պետական չափորոշիչներով, քանզի հասարակական գիտակցության պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապե որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակվում են: